

Կամարաձեւ շինուածք՝  
եւ նամի հյուական լըրման.  
Ալ դու մեծամեծ մամիք՝  
եւ տաճկաց պարտէղ եւ պատան.  
Դրազիւ շատ ի վարչ ծ ախին՝  
զոր թողցուք զանուանն զանազան :  
Եւ յեկեր ծովուագարսաբ՝  
որ արքայազունք եւ առողման,  
190 Ընդ որ քեօրքից է ծովու՝  
'և այլ յառաջ ամբարք լընուն զձեան :  
Ասու եւ գարճ պաշին է՝  
յարբունին կըրն յամարան .  
Եւ հայք ունակը բնակութեամբ՝  
ի պատս յեկեցիցին գան :  
Ընդ սահմանօք շատ են՝  
պատան ուր պալզար եւ հայ պարտիրպան ,  
Առ ամի ծովու փոքր՝  
որ ծայր մի ծովու երեւան :



ԱՎԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՄԻԱՅՐԵՐ ԳՈՅՆ ԳՈՅՆԱՑՈՒՅԹԻՐԵԼ ԵՐ ՀԱՅԱ  
ՀԻՆ ՔԱՂԱԿԱՑՈՒՅԹԻՆ ԽՐԱԿԱՐԵԼ  
ՀԱՅՈՒՄ ԵՐՐՈՐԴ  
ՔԱՂԱԿԱՑՈՒՅԹԻՆ ԽՐԱԿԱՐԵԼ

Ը Ա Ս Խ Ե Ր Կ Ր Ո Ր Դ

9

Ժամանելութեա առանց իրակիք:

(C<sub>1</sub>0F<sub>10</sub>-L<sub>1</sub>, C<sub>1</sub>0F<sub>10</sub>-L<sub>2</sub>)

II.

Միախար Գօշի իրաւաբանական կարգերը  
ժառանքութեան վերաբերմամբ Համապատաս-  
խանումը են շատ քիչ բացառութեամբ ըստ  
Մօրգանի ընդունած երրորդ շղթանին։ Յիշաւի  
Ներքյ սերած բացարութիւններից կը աես-  
նենք, որ ժառանքութեան իրաւունքը չէր կա-  
րող բարձր կու ըստուեկան համայնքի առնենքը ։  
Դիտանք, ունի յաջորդութեամբ էր տեղի  
ունենում ըստ Միախար Գօշի ժառանքական  
իրաւունքն ըստանիք կազմող ազգականների  
մէջ, երբ հայրը մեռնում էր եւ ժառանքու-  
թիւնն առանց որեւէ կոտակի թունում։

1. Հօր մահուամբ ժառանգում են նախ եւ առաջ նրա սրբից. Նմանապէս դպրեր որոնք տանն են եւ մարդու չեն զնացի, տակաւին

(III, 42, 43, 44, 45): Արդ, առաջին հայեաց-  
քից կարծես ապնատական սկզբունքը խախտ-  
ւում է Միհիթար Գուշը, թերեւս ինքն էլ խո-  
տպանուում է այդ, քանից կրկնելով իր յօ-  
դուածների մէջ, թէ մովիսական օրէկների եւ  
այլ առար կանոնների մէջ դուստրների ժառան-  
գական իրաւունքները սահմանափակուած են,  
բայց թէ ինքն աւելի օրինաւոր ու շիտակ է հա-  
մարում զջատել օրդիների ու դուստրերի ժա-  
ռանգական իրաւունքները (II, 42, 43, 44, 45,  
46): Այսանեղ տեսնում ենք ինչպանդական  
իրաւունքի ազգեցութիւնն հայրականի վրայ  
դժուեւ Յուստինիան իւր ՏՏI Նօվիլլյայի  
մէջ յայտնուում է, որ հայերի մէջ՝ “բարբարա-  
սական, սովորութիւն իստարութիւն գնել որ-  
դիների եւ դուստրների ժառանգական իրաւունք-  
ների մըջը, զրիելով Վերջիններին ժառանգու-  
թիւնից: Իւր այդ օրինական գրութեամբ Բիո-  
նադական հայուրը արդեւում է այլ եւս այդ  
տեսակ կտրութիւնն եւ հրամայուում է տեղյոց ու  
ազգիների ժառանգական իրաւունքը հաւասա-  
րացնել:... Ut et apud Armenios haec ipsa  
tenere, quae etiam apud nos occasione suc-  
cessionis seminarum, et nullam esse differen-  
tiam masculi et feminae, sed sicut et in no-  
stris legibus dispositum et secundum quam  
figuram heredes edistant parentum, hoc est  
patris et matris, et avi et avae et adhuc lon-  
gius, et eorum qui post ipsos sunt, hoc est  
filii et filiae et quemadmodum ipsis hereditatem  
transmittant. Սակայն, ինչպէս եղագակայնուում ենք  
մեր Դատաստանագրի յօդուածներից, բիուզան-  
դական այդ ազգեցութիւնն չէր հասել լիովնին  
իւր Նպատակին եւ անկարող եղաւ խախտերու-  
ագնատական սկզբունքը հայ ժառանգական ի-  
րաւունքից: Մի սկզբունք, որ պահպանուելով  
մինչեւ օրս ժողովրդի սովորութեական իրաւունքի  
մէջ տակաւին իւր ազգեցիկ գերն է խաղացել  
եւ խաղում է հայ իրաւունքի պատմութեան  
մէջ: Երբէի Միհիթար Գուշն տեսնելով, որ  
հայերի մէջ խիստ արմատացած է եղիլ ազնա-  
տական սիստեմը, կամեցել է մի տեսակ հաշ-  
տեցնել իւր Գատաստանագրի նմանքամ յօ-  
դուածները ժողովրդական սովորյթների հետ:  
Աւատի մի կողմից՝ հաւասարեցնելով օրդիների  
ու անհն մնացած դուստրների իրաւունքը ժա-

<sup>1</sup> De Armeniis ut ipsi per omnia sequantur Romanorum leges. 526 ap.

Հ Համեմ. մեր յօդուածք՝ հայ իշտանիտան իբ-  
սանց. Ազգագրական Հանդէս գիրք XV և. XVI.

անգութեան վրայ, որով մասամբ պահպանում էր աղնատական սկզբունքը եւ հօրական ստացուածքը գերդաստանի սահմաններից դուրս էլ չեր գալիս. միւս կողմից՝ առաջ է բերում սահմանափակումներ ամուսնացած դուստրների նկատմամբ, սոցա զգկերպ հօր ժառանգութիւնն ձեռք բերելով լիակատար իրաւունքից. “իսկ արտաք գնացեալն եւ առն եղեալն, այլ ոչ կարեն ժառանգութ լինելու (II, գլ. ԿԲ): Վասն զի վերջնների ժառանգական իրաւունքով հօրական գյուղը անցնելու է արդեւ մի ուրիշ աղջական գծին եւ այդպիսով ոտնձիր կարող է լինել ագնատական սկզբունքը, որ այնպատ սուրբ էր ժողովրդի աշքում. “զի մի ժառանգութիւն յօսարս եցէր (Անդ): Այդ է պատճառը, որ Միկիթար Գօշի Դատաստանագործի մէջ պաշտպանում է մի սկզբունք, որի հիման վրա ամուսնացած դստերը համարում են եղբարօր կեսը, այսինքն իրավանչիրն պահպան աղջիկ իրաւունք ուներ հօրական ժառանգութիւնից ստանալ միայն բաժին, այն էլ երկու անգամ պակաս քան եղբայրը. “Երկու դուստր առն եղեալն միոյ որդւոյ առյէ բաժին (II, գլ. ԿԲ, ԿԳ, ԿԵ, Ղ.Ջ):

Թէ ինչու ամուսնացած դուստրը երկու եւ երկբ-չորս եւ այլ անգամ պակաս պէտք է ստանայ եղբօրից, Միկիթար Գօշը փորձում է հիմնանորել Ս. Գրբով եւ ասում է. “զի կին ըստ կիսոյն անուանի մարմոյն, (III, գլ. ԿԳ): Դուստրների ժառանգական իրաւունքի սկզբունքը դա Դատաստանագործի մէջ պաշտպանում ու բացատրում է ի հարկէ քրիստոնէական ոգու համաձայն: Պատկուած աղջիկները, հեռանալով հօր սանից, արգէն վերցրած են լինելու իրենց հարսանեաց բաժինն, ուստի “զոսա հաւասարաքանի մահու հօրն չէ քրիստութիւն, իսկ բորբոքվն զգկե աղջիկներին, նման մօվ սիսական եւ “հեթանոսական”, որէշների, մանաւանդ ոչ - ամուսնացածներին ժառանգական իրաւունքից՝ դա նշյալքու անարդարութիւն է համարում, որովհետեւ դուստրների համար աւելի դժուար է ապրէլ, քան թէ որդիներին. “Եւ այդպէս ամենեցուն հաւասարութիւն եղից եւ տկար ազգն ինամենցի եւ մի նուազ լիցի (II, գլ. Ղ.Ջ). “Հաստատի ըստ այսմ որդւոյ եւ դստերաց հաւասար լինել ժառանգութիւն հօր, ըստ որում եւ Աստուած զոյդ ետ զժառանգութիւն արքայութեան արանց եւ կանանց. (II, գլ. ԿԳ):

2. Երկրորդ կարգը ժառանգութեան մէջ, առ ի չգոյս զաւակների՝ գալիս էր Գրնուով եւ

բուն և եթէ միայն սա զաւակի տէր էր: Հակառակ գէպքում այդ կարգը նա ստիպուած էր զիջանել մեռնողի ամուսնացած դստերը, եթէ վիրշին ուներ զաւակներ. ‘իսկ եթէ առն լիալ դուստրն կամցից իւրաք ծննդոքն եւ արամին գալ եւ հայրենիս ժառանգելու նոցա լիցի եւ մի եղբօրին: Սակայն զգկուելով ժառանգութիւնից, մեռնողի եղայրն այնուասենայինի ստանում է որոշ մաս, այն է ¼ թողած ժառանգական գործից (II, գլ. ԿԲ):

3. Երրորդ կարգը պատկանում էր մեռնողի հօտեթօքը, իսկ երբ ողջ է հայրը, սա է ժառանգութ (II, գլ. ԿԲ):

4. Ա. Երջնին կարգը, վերյալշեալ միւս կարգեցից ներկայացուցիչների բացակայութեան գէպքում, համում էր մացեալ ազգականերին “ի ցիցէ Տօրն”, Այստեղ ժառանգական իրաւունքը տարածում է “ընանիքի մերձաւորների, — արակաների վրա մինչեւ ազգակութեան չորրորդ աստիճանը (II, գլ. ԿԲ, ԿԳ):

Այս բոլոր կարգեցից յետոյ արդէն, առ ի չգոյս ոչ մի ժառանգի, ժառանգութեան հարցի եւ գյորի անօրինման հարցը վերապահում էր դատաւորների վայեցողութեանը (II, գլ. ԿԲ):

### III.

Միկիթար Գօշի սահմանած վերյալշեալ ժառանգական կարգերը քննելիս, զարմանալի նմանութիւնն ենք գտնում ոչ միայն մայստրական օրէկների, այլ եւ հին-յանական, այն է Մորոնի սահմանած ժառանգական կարգերի ու հին Հոռովմէական XII տախտակների (XII Tabulae) ժառանգական իրաւունքի հետ: Առաջին հաւացքից կարելի էր կարծել, որ մեր Դատաստանագրքը հեղինակը անշուշտ ազդուել է մայստրական օրէկներից, ինչպէս դա երեսում է Դատաստանագրքի II մասի ԿԲ յօդուածեց, որի առաջարանը վերցրած է հին կտակարանի թուոց գորքի հէ (1—11), որտեղ որոշում են Սաղապատու զատեր ժառանգ ժառանգութեան հարցը: Ըստ այնմ հետեւեալումն է կայանում հին երբայցիների ժառանգական իրաւունքներ: Ժառանգների առանգները ներկայացնում էին հանգուցեալի զաւակները, բայց ենթագրում է, որ որդիները ստանում էին ամբողջ գւըը, պարտաւորուելով պահելու տանը մացած իրենց քոյրերին, այսինքն մեռնողի աղջիկներին Երկրորդ կարգը կամցում էին աղնատաները, որոնք բաժանում էին երկու խմբի: նախ հանգուցեալի եղբայրները, որոնք

առ ի չգոյէ հանգուցեալի զաւակների պէտք է ժառանգէին եւ ապս՝ եղայրներ շլնելու դէպ-  
քում պէտք է ժառանգէին հանգուցեալի հօրեղ-  
բայրները։ Ա երջախէս երրորդ կարգին էին պատ-  
կանում սերնդի անդամները, որովք ժառանգում  
էին նշյալիս իրենց ազգակցութեան աստիճանին  
մերձաւորութեամբ, այսինքն՝ “տաշիք զժառան-  
գութիւն ընտանւոց ազգականի նորա։ Ի ցեղէն  
նորա ժառանգեաց զնորայն։”

Սակայն հայոց դատաստանագրքի ժառանը-  
գական իրաւունքը, որ այնքան նման է նաև Հին  
յունական եւ մանաւանդ Հին Հռոմեական XII  
Տափառակների, որէնքներին ի հարկէ չէ կարող  
ծառայել իրեւ փաստ, թէ ազդու ած լինի այս  
վերջինների կողմից, այլ ընդհակառակն մեզ  
հիմք է տալիս նոմերելու, որ հայոց դատաս-  
տանագրքին նօրմըր կարող են յօրինուած լինել  
աւելի շուտով հայ սփրոյք թական իրաւունքը  
եւ ժողովրդի մէջ բարագի ադաստական  
սկզբունքի վրայ յենուելով, քան թէ մովսիսա-  
կան օրէնքների անմիջական ազդեցութեամբ  
Ապա թէ ոչ չեմ Հռոմեական XII Տափառակ-  
ների, Սօղովի սահմանած հին յօնական ժառան-  
գական կարգ երի եւ մովսիսական օրէնքներին  
այդ զարմանալի նմանութիւնն պէտք է վե-  
րագրէնիկ նրանց փիփառագրձ ազդեցութիւններին  
մէկ միւսի վրայ ունեցած ըստ ժամանակագրու-  
կան կարգի, որ իրաք մնան տեղի չէ ունեցել  
Ամենահետաքրքիրն այն է, որ թէ հայ դատաս-  
տանագրում, թէ մովսիսական օրէնքներում եւ  
թէ XII Տափառակների հռոմեական իրաւուն-  
քում, աչքի է զարնուում մի բնորոշ երեւոյթի  
հայրը չէ կարող ժառանդ համարուել մեռնողի  
որդուոց յետոյ, այսինքն ժառանդման երկրորդ  
կարգումն չէ. ըստ Մխիթար Գօշի մեռնողի հայրը  
երրորդ կարգումն է: Վերոյիշեալ զուգագիպու-  
թեան բոլոր հօնմանից երեւոյթիները ապացու-  
ցուցանում են միայն, թէ ինչպէս միանման  
ողբարձուուրաքան այսմանների մէջ զանա-  
զան ժողովրդների հայեացքներում տակածու-  
մեն այնքան նման իրաւունքն հասկացութիւններ-  
իւ արաւուրանականսկզբունքներ, հիմունած միեւ-  
նոյն սերնդուքան ագնասական կազմի վրայ: Այդ  
բոլոր ազդութիւնների մէջ, նշագէտ է Հայերի  
տեսնում ենք, որ ազդ ակցութեան դաշտում  
ճանաչում էր միայն առնական գծով եւ  
ստացուածքը կարող էր ժառանդուել բացառա-  
պէս սերնդի մէջ եւ նրա սահմաններից բնա-  
երքէ շգփառ է գուրս գար: Այս վերջն եղան-  
կացութիւնների հիման վրայ հնարաւոր Կրիստո-

սուսպանել հայոց դատաստանագրքի սահմանած ժառանգման երկրորդ կարգը, որ առաջին հայ- եացից կարծես հակասում է ազնատական սկզբունքին: Մովզիսիական հինչյունական եւ XII տախտակերի հին հովովեական իրաւունքներով ժառանգութիւն առ ի չգոյշ արոյ զաւակերի անցնում է ամբողջովին դուստրներին, միմիայն այն պայմանով, որ սրանք ամուսնացած լինեն իրենց աերնագակիցների հետ, որպէս զի շախտորի ժառանգման ազնատական սկզբունքը եւ ստա- ցուածը պահպանուի ազնատական ռեինդի շրջանակի մէջ: Անցնելով պատմա-համեմատ- կան հոյն վկայ մեզ այժմ հասկանեմի կը լինի դատաստանագրքի օրեկքը, որի համաձայն ժա- ռանգման երկրորդ կարգը պատկանում էր մեռ- նողի երգործ, եթէ միայն սա զաւանակների տէր էր, հափառակ դէպքութ ժառանգութեան իրա- ւունքը նա ստիպում էր զի հանել մեռնողի ամուսնացած դստերը, եթէ վէրջին ուներ շառա- կեր: Այսինք նկատում ենք մի տեսակ ձգտում անլուկ պահպանել ազնատական սկզբունքը, թէեւ իրեւ ժառանգ հանդէս է գալիս մեռնողի ամուսնացած դուստրը: Մեռնողի անզաւակ եղ- բայրը, ժտուանգելով, վերջիվերջ կարող էր վտագի ենթարկելու խափանել սերներական ազնատական ստացուածքի գոյութիւնը, քանի որ չկային զաւակներ: Խայ երբ մեռնողի դուստրը էր իւր զաւակներով հանդերձ ժառանգում, այն ատեն պէտք է ենթարկենք, որ Սիթիթար Գոչը կամ աւ ելի լաւ ասած հայ ժողովրդի սովորու- թական իրաւունքը հանապազ ի նկատի է ունե- ցել, որ այդ դուստրը ամուսնացած էր իւր սերն- դին պատկանող մի ազգակցի հետ: Նոյն խկ եթէ այդ ազգկայ ամուսինը սերներական ազգա- կան չէր, այնուամենային՝ “եթէ առն լեալ դուստր կամիշի իւրօք ծննդոքն եւ արամին գալ եւ հայրենիս ժառանգ ել, նոյս լիցին եւ մի եղօր,” խօսքերը պարզ ապացուածում են, որ ամուսնացած դստեր մարդը մտնում էր նոր տան մէջ, միանում էր մի նոր “օճամիի”, հետ, այսինքն որոշ ձեւակնութեամբ դառնում էր ազգական ազնատական անդամ այն գերդաս- տանի, որից գալում էր կի կինը: Այդ իրաւա- բանական հասկացողութիւնը հայ ժողովրդի մէջ մինչեւ օրս էր պահպանում է ունիտայ- նիւն սովորոյթի մէջ, երբ փեսան ժառնում է իւր կնոջ սերնդի ազգակից, կնոջ հօրական գերդաս- տանի անդամ, որպէս զի շազկապուի նրանց հետ ազնատական կապերով, որոնք այնպէս անհրա- ժեց, են ժառանգման հասունմ: Աներեւ է

արդ, որ Մինիթար Գօշը, սահմանելով ժառանգ-ման վերցյիշեալ երկրորդ կարգը, այլապէս չէր կարող վարուել, երբ նկատի առնենք, թէ ինչ խոր արմատներ ունի հայ սովորութական իրաւունքի մեջ ագնասական սկզբունքի: Այդ ագնասական սկզբունքի կայունութիւնն հայ ժողովրդական իրաւուանական հայեացցեներում այնքան մեծ ե բռնում, որ հոգեւոր ազգակցութիւնը՝ որդեգորութիւնն, մնիմեայութիւնն եւ այլն՝ զանազան սրբազնագործած ծէսերով, նման հին հոռվէմական առութական մասնաւութիւնն, գալիս է միշտ վերականգնեցնելու, փրկելու սերդի ագնասական գիշը պահումից եւ իսպան մարելոց առ ի ցոյք նահապետից առ-սական գծով սեռող ժառանգների:

## IV.

Հիմնուելով ագնասական սկզբունքի վրայ, ախներեւ է, որ Գատաստանագիրը միանգամայն արգելում է ժառանգութեան իրաւունք տալ կանացի գծով ազգականներին: “ոչ եղայրյ մօրն (մեռողը) եւ ոչ որդի նորա եւ ոչ որդի քուերն եւ ոչ մօրքոյր եւ ոչ նորին որդի կամ հօրքոյր կամ ժառանգեն եւ կամ մասնաւորենն, այլ եթէ միայն կտակով նշանակուեն, երբ նորա այդտեղ հանդէն են գալիս իրեւ օտարներ (II, գլ. ԿԲ): Խորի զանակները նմանապէս ժառանգում են այն ազգականների շարքը, որոնք ոչ մի իրաւունք չունեն ժառանգութիւն աստանալու: “զի սերն ոչ է հօրն ոչ ժառանգէն: Եւ եթէ խորի զաւակը ապրել է իւր հօր տառ ու աշխատել է, այն ժամանակ ևս “իւր վարձկանի առցէ վարձ եւ ոչ մասն” (II, գլ. ԿԳ): Վերջին կէտ առ շուշտ որոշ չափով յօրինուել է սովորութական իրաւունքի ազգեցնեթեան ներքյ: Հայ ժողովրդի մէջ տիրապետում է այն հայեացքը թէ խորի որդին երբ իւր հօր տառը ապրել է ոչ այնքան շատ ժամանակ, ևս չի համարում ժառանգ, այլ ընդհանուր գոյքի բաժանման ատեն կարող է ստանալ իւր աշխատած մասը միայն<sup>1</sup>:

Մեռողի մայրը, բայրը կինը զգուած ժառանգութեան իրաւունքից, բայց միայն կարող են ստանալ “մասն ընդհանուր գոյքից. մայրը ստանում եր “երեք թասու,, (¹/₆ մաս ամբողջ գոյքի), կինը — “գանգ,, (¹/₆ մասը), բայրը — “գանգ եւ կէս, (¹/₄ մասը գոյքի) (II, գլ. ԿԲ.):

Երկրորդ ամենանութիւնից ծնուած որդիներն առ ազդիկները ժառանգութեան բաժնում

ստանում է կին համեմատաբար առաջին ամուսնութիւնից ծնուած զաւակների հետ նուազ չափով: Այսուղե նոյն կարդերն են նկատի առնուում, ինչ որ խորդերի ժառանգական իրաւունքի մէջ (II, Ղ.Զ): Բայց նիշպէս էր նայում Գատաստանագիրը այն ծնունդների ժառանգական իրաւունքի վրայ, որոնք գեր արգանգում են լինում: Հօր մահուան միջոցին: Երբ կինը յշի է եւ այրդ վախճանեւում է, ժառանգները պարտաւոր են հսկել ծննդաբերութիւնն, “ապն կալցին ծննդեանն, եւ երբ ծնուի մասնութին, սրան խսկակն ժառանգ համարելով, հաստատել իւր իրաւունքների մէջ: Կոյնակու ժառանգ է հաշակուունորածին, երբ սա ծնուամ է հօր մահուան վայրկեանին: Այս վերջին դէպքում կենականի մասցած ազգականները կարող են ժառանգնել իրաւունքները այդ մանկանից արգեն կարող են ժառանգնել իրենց հասանելիք արգեն եւ ուղարկի կերպով վախճանանուածից: Պօր մահուան դէպքերում, երբ գա տեղի է ունենում ծննդաբերութեան միջոցին կամ յետոյ, մասնութին ժառանգում է մօրը եւ մանկանից արգեն կարող են ժառանգնել միւսները, ոյն իսկ հօրը (II, գլ. Ղ.Ֆ.):

Բացի այդ՝ Մինիթար Գօշը սահմանում է նաեւ մի քանի իրաւունքներ հաշմ ու տկար զաւակների մասին: Ժառանգութեան իրաւունքից խսպան զըկուում են ի նեկ մտաւոր հաշմերը, “որպէս թէ բնաւ չունել միտու յսունել մտաւոր ի իմացուածու: Եթէ մտաւոր անկարողութիւնն առաջացել է ծնուելուց յետոյ եւ այդ տկարը բժշկուում է, այն ատեն ժառանգութիւնն աւանդուում է ուրիշներին, հաւականորդն հոգաբար-ձուներին կամ ինամանակալներին: Տկարի հաւարեալ բժշկուելուց յետոյ ամիողը ժառանգութիւնն իրեն է յանձնենում, իսկ եթէ չի բժշկուում, խսկակն ժառանգները տիրանում են գոյքին եւ պարտաւոր են ինամել նրան մինչեւ մաս: Այս վերջին կէտ առ հետուում է, որ ի նեկ մտաւոր տկարներն պիտի մինչեւ իրենց մահը ինամասին սրանց ստացուածքը ժառագուների կողմից: Գատաստանագիրը նաեւ յիշում է, որ չպիտի զըկուեն ժառանգութիւնից, “թէ այլազգ եթէ՛ կաշ, կամ կյոր, կամ այսահար որ չիցէ անզգ այեալ, կամ գոտի (բողոք) որ չիցէ մնաւին ապականեալ, կամ անդամալցի իմաստուն, եւ այլը այսպիսիք որ բաւական գոն այլք սպասաւորք զամարների ժառանգնել,,: իսկ որոնք անդունակ են իրենց բանականութեամբ այդ վիճական ցաւու դրութեան մէջ կառավարել այլք սպասաւորք զհայրենիս,,: այն ժամանակ նրանք սովորական եղանակով “այլք

<sup>1</sup> Յանձնական, Հարուծո-Կորնակչէ, օբյան չափանակ, արտակ, եր. 31.

ժառանգաւորս խնամիցին մինչ մահ,, (II, գլ. Ա.):

Ըստանեկան իրաւունքը քննելիս արդեն առիթ ենք ունեցել շօշափել եւ ամուսինների ընչափան իրաւունքը, Մ' Եղ յայնի է, որ կրն ել ուներ որոշ ընչափան իրաւունքներ, այն էլ միմայն իւր բրեծաք բաժնի՝ “պայցիքու ու Շերեաց տեսոյնի վրայ: Արդ ինչ գրութեան մեջ եր ընկուում ինչ այդ սեփականութիւնն անուսիններից որեւ է մէկի մահուամբ: Մարդու մահուամբ, ինչպէս գիտենք (I, գլ. ՃԻԲ), անզաւակութեան գէպքեռում, յանձնուում եր կնոշը իւր պատկանելիք սեփականութիւնն: Պարզենք, թէ ինչ հետեւանքներ են տառաջ գալիս ժառանգանական իրաւունքի մէջ կնոջ մահուամբ: Այսուեղ գէպքուրապէս գեր եր խաղում այն հանգամանքը, թէ արգեօք ամուսինները զաւակի տերեր են, թէ՞ ոչ: Եթէ կային որդիք, այն ժամանակ բոլոր մօրական ստացուածքը անցնում եր սոցա, ճշու այնպէս, որպէս դա ընդունուած եր հօրական ստացուածքի ժառանգման կարգերի նկատմամբ: Ընդհանրապէս կնոջ մահուամբ նրա ընչքի վրայ ժառանգական իրաւունքն նցն ծաւալով եր կիրառուում, ինչ ծաւալով եւ մարդուու: “Եւ կանանց մեռելց նցն լիցի դատաստան, որպէս եւ արանց զիկի մահուանուն՝ այսինքն նցն չոր կարգերը ժառանգների, եւ առ ՚ի չգյոյց վերջնների՝ ՚ի ցեղէ հօրն (կնոյ) ժառանգ է մինեւ չըրդորդ գայն (II, գլ. ԿՊ): Ուրեմն, երբ մօրական ինչքն անցնում է զաւակներին, նմա-

նապէս եւ զաւակների հայրը հանդէս է գալիս իրեւ իրաւազօք անձն, ուր պատսխանառուու է այդ ընչքի ամրողութեան ու անձեռնմխելիութեան համար: Մինչեւ անգամ, եթէ զաւակն զախճանուի առաջ քան մայրը, վերջնին ստացուածքը, իբրեւ հանգուցեալ զաւակի ապահուանդման պատկանելիք, չի վերադառնում մօր լինակատար տրամադրութեանը, այլ մնում է ամուսնուն: Երբ մայրն էլ է մեռնում, այդ մաացած գյոյքը մի մասով անցնում է ամուսնուն, այսինքն իրեւ վաղամեռի զաւակի ժառանգին, իսկ միւս մասով կնոջ հօրը, եթէ վերջնին տակաւին ապրում է (II, գլ. ԿԲ): Երբ ամուսնութիւնն անզաւակ է եղել, կնոջ մահուամբ սրա գյոյքը անցնում է իւր հօրը, իսկ ամուսնին վասն՚ի միասին կենակցութեանը ստանում է, միայն “մաման”, այն է մի դանէ (մասը գյոյք): Բայց երբ բնաւ զուգաւորութիւն չնու ունեցած, եւ կինը վախճանուել է կոյս, անժամանակ ամուսինն ոչինչ չի ստանում: “զի որպէս ոչ է տիրեալ մարմնոյ նորա, նշյանպէս եւ ոչ տիրե ընկցի նորա..” Եւ գյոյքն ամրողապէս անցնում է կնոջ ազգականներին (I, գլ. 2Ե, II, գլ. ԿԲ): Այդ ամուսինն ստանում է մի դանէ, ոչ միայն այն գէպքում, երբ անզաւակ են, այլ եւ երբ զաւակ կայ մէջ տեղը: Ինչպէս որ հօրն ժառանգելով, որդին տախիս եր մօրը մաս՝ մի դանգ, “նշյանպէս զմօրն ժառանգելով որդին, հայրն դանգ առցէն:

(Հայուսունութեան)

Խ. ՍԱՄՈՒԷԼՅԱՆ

## Ա Զ Գ Ա Գ Ր Ս Կ Ա Ն

## Ս Ա Ս Մ Ա Ն Ց Ց Ց Ց Ո Ւ Ն

Հայ ժողովրդական զիւցազնավեպի նոր պատրիարքական ժամանակակից ժամանակակից ժամանակակից:

## Ո Ւ Մ Մ Ա Ն Ց Ց Ց Ո Ւ Ն

Ա.

*Սամասար ու Բաղդասար:*

91. Թէ իսպանը ծի եա, թի քեանիմ՝ իսպան՝ զըմեն էլ ընձկոն պառկան յառանեւ (ը) թուց թիմին: Ազէն չգիլիշայ ծէն խանայ:

92. Սանասար (ա)սաց. “Ա՛զա, աէսար ինչ խանգ յըստացան, ինչին մըմնէկ ու (ր) տեղ պառկան վըր առ թիմիշիմք, մէկ ծի չկայ կանգն:

*Սամասար ու Բաղդասար:*

91. Թէ հազար ձի է, թէ քանի մը հազար՝ ամէնն ալ այդպէս պառկեցան անոնց թիմարին առջեւ (առկը): Աղան չը համարձակեցաւ ձայն հաներ:

92. Սանասար ըստաւ. “Ա՛զա, աէսար ինչպէս հանգստացան, ինչպէս ամէն մէկն իր տեղը պառկեցաւ երբ թիմիշիմք. մէկ ձի չկանգն: